



8914-93 աճ

11-26

— Յես ուզում եմ գրել մանկապարտեզի մասին, — ասաց կին գրող Տարախովսկայան: Մանկապարտեզներից վերն է ամենահետաքրքիրը:

— Այդ դեպքում կարգացեք այս տեսրակը, — ասաց խմբագիրը. — սա մեր ծրագիրն է, վորտեղ գրված է, թե այս տարի լեռեխաների համար վեր մանկապարտեզների մասին պիտի գրել տանք:

Այ, նայեցեք, այստեղ գրված է — ազգային փոքրամասնությունների նոր կենցաղը: Դա նշանակում է, վոր հարկավոր է գրել, թե հեղափոխությունից հետո խորհրդային սիուիթյան մեջ ինչպես է փոխվել ազգային փոքրամասնությունների կենցաղը:

Իսկ այստեղ, ներքևում, գրված է՝ գնչուական մանկապարտեզ:

Ահա թե վեր մանկապարտեզի մասին պիտի գրել:

Տարախովսկայան հենց այդ որը գնաց գնչուական մանկապարտեղ. սակայն դուրս լեկավ, վոր հասցեն սխալ էլին տվել, շփոթվել էլին տան համարը: Նա չերկար ման լեկավ Վորոնցովյան փողոցով ու հարցրեց անցորդ ներին:

— Ընկեր, չեք կարող ասել, թե վորտեղ է գտնվում գնչուական մանկապարտեղը:

Բայց վոչ վոք չեք իմանում:

Վերջապես նա նկատեց մի հարկանի փոքր տուն, վորի պատուհանի մոտ բազմություն էր հավաքվել: Այնդեղ կային և լեռեխաներ, և մեծահասակներ, բոլորն էլ ջիթերն ապակուն կպցրած՝ ներս էլին նայում պատուհանից: Տարախովսկայան էլ նայեց ու տեսավ ցածրիկ սեղաններ, փոքրիկ աթոռներ, սև գլուխներ. ու թուխ բոունցքիկներ: Հենց այդ էր, վոր փրնտում էր նա:

Տարախովսկայան ներս մտնելով, սկսեց խոսել, խաղալ գնչուական մանկապարտեղի լեռեխաների հետ: Միուս որը նա դարձյալ լեկավ: Յեկավ և լեռորդ որը:

Հետո նա գնաց գնչուական դպրոց ու խոսեց տղալին գնչու ուսուցչուհու հետ:

8914
34368

ՄԵՐ ԲՈՒԴՅՈՆՆԻՆ



ՄԵՐ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԵՁ
ՄԵՐ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԵՁ

Այդ ամենն արքան հետաքրքիր էր, վոր նա նույնությամբ նկարագրեց տեսածը, առանց հորինելու: Այն պատմվածքը, վորտեղ հեղինակը գրում է միայն իսկույթունը, վոչինչ չավելացնելով, կոչվում է ակնարկ:

Տարատվական գրել և լեզու ակնարկ մեկը գնչուական մանկապարտեզի, միուսը գնչուական դպրոցի մասին և լեզուսն էլ հանձնել և խմբագրութանը:

Սմբողիրն ակնարկները կարգալով, ասաց:

— Առաջմ կտպենք միայն մեկը: Թող լեռնալեռները մեզ գրեն իրենց կարծիքը, թե ինչպես է նրանց դուր լեկել մանկապարտեզի մասին գրած ձեր ակնարկն ու արդյոք ցանկանում են գնչուական դպրոցի մասին էլ գրվի

Յերեսուն շագանակազույն, փոքրիկ բռունցքներ բռնել են փայլուն ալումինի զգալներ:

Յերեսուն սպիտակատամ բերաններ ծամում են ու ժպտում:

Վաթսուն ուրախ սև աչք նայում է ինձ:

Յես գանվում եմ գնչուական մանկապարտեզում:

— Ողջում եք մեզ հետ ճաշել, թավ ձայնով հարցնում ե Վալյա Շիշկովան, որվա հերթապահը:

Վալյա Շիշկովան ութ տարեկան է նա թուխ է բոված կաղնու պես: Նա հագել է լուսնազարդ, ուսի գոտիով, մի կողմ թեքած թավշյա սև գլխարկ ու կապույտ շրջագետ:

Նա թավաձայն հրամայում է:

— Տղերք, լուս մնացեք, վոր ճանճի բզզոցը լավի:

Մածլիկ սեղանի շուրջ տիրում է լուսնուն, կարգ—կանոն:

Յես նստում եմ լեռնալեռների մոտ ու միասին ուտում ենք ապուր ու կապիտ:

Պատից կախված են ուսերեն տառերով զրված գնչուական լուսնազաններ:

ԱՄԵ ԵՐԱՍԱ ԲԱՐԵ ԴՐԵՆԳԻՐՈ ՍԵՎՈՒ

— Իա ինչ է նշանակում ուսերեն, — հարցնում եմ ղեկավարուհի Նյուշալին:

Նա լուս է և մտածում: Նա ցանկանում է ըստ հնարավորության լավ թարգմանել այդ լուսնազ:

Մինչ Նյուշան մտածում է, Վալյա Շիշկովան արագ—արագ վրա լե տալիս:

— Ռուսերեն դա նշանակում է «Ողջենի խորհրդային ցարևանագանին»: Իմացի պատից կախված է Ստալինի մեծ լուսանկարը, վորի տակ զրված է:

ՄԵՐ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԵՁ ԲՈՒՈՐ ԱԶԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՎԱՍԱՐ ԵՆ, ՄԵՐ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԵՁ ԲՈՒՈՐ ԱԶԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՄԵՐԱԾԽ ԵՆ

Ստալինից դեպի աջ գանվում են լեռնալեռների նկարներ, ահա լեռնք վոտանի հավը, շան նման մեծ, կախ ընկած ակնաջներով:



— Միթե չերեքվտանի հավ ե լինում այդպիսի ականջներով,— հարցնում եմ լերեխաներին:

— Իհարկե չի լինում,— աղաղակում են լերեխաները,— դա Տոլլան ե սխալ նկարիչ:

— Իսկի լել չե, բարկանում ե Տոլլան,— իմ աչքովն եմ տեսել այդ հավը. լես տրամվաշով անցնում եյի, իսկ նա կանգնել եր կայանում, շարժում եր մեծ ականջները: Ազնիվ պիոներական խոսք:

— Ի՞նչ ես խաբում ու ազնիվ պիոներական խոսք տալիս, լերը գեռ փոքր ես պիոների համար,— խիստ նկատում ե Վալլա Շիշկովան:

Յերեխաները ծիծաղում են:

Յերեքվտանի հավի կողքին գտնվում ե ինչ վոր տղամարդու-նկար: Նա գլխին դրել ե դեղին կասկա և ունի մի հատ վառ կանաչ գուլնի բեխ: Տղամարդը արջավում ե գերրի նման շերտավոր ձիու վրա և ճոճում ե կեռ սուրը: Նկարի տակ գրված ե՝ Ամառե Բուդյոննի (մեր Բուդյոննին):

Թեթե խոմփոցը խանգարում ե համատարած լուռօխուներ. քնել ե շորս ատրեկան Պաշկա Շատրովը՝ կատկետը բերանին: Նյուշան զգուշորեն գրկում ե նրան. Պաշկայի գլուխը կլոր, փայլուն կծկի նման ընկնում ե նրա ուսին: Ծաղը վերջանում ե:

— Կարդ պահպանել, չբարձրանալ տեղերից, վոր ըստ հասակի կանչելու լեմ ձեզ: Ապա ամենաբարձրը, դու, Ստեշա Որլովա, առաջ արի,— հրամայում ե Վալլա Շիշկովան:

Ստեշա Որլովան դեղին ժապավենը բարակ ծամին ու կարմիր մեծ աստղը կրծքին, պարելով ցատկում ե սեղանից:

Տոլլա Մասնալսկին լերկորդն ե ըստ հասակի նա հագել ե նորածն բաճկոն ու լերկար շալվար: Հոր բաճկոնը հասել ե մինչև նրա ծնկները:

Քսանինը սև գլուխ շարք են կազմում: միայն մի գլուխ, լերեսունյերորդը բոյորովին սպիտակին ե տալիս. պայծառ ունքերի տակից նայում են նրա կապույտ աչքերը:

— Ես ի՞նչ սպիտակամորթ գնչուհի լե,— ասում եմ Նյուշային:

— Նրա մալրը գնչուհի լե, դասատու լե զ՛ չուական դպրոցում, իսկ հալըրը ուու ե,— բացատրում ե նա:

Յերեխաները թողնում են սեղանները:

— Քալլով մարչ հառաջ,— հրամայում ե Վալլա Շիշկովան:

Նա չի կարողանում տեղումն հանգիստ մնալ, ցատկում ե անվերջ նրան թվում ե, վոր հեծել ե մի տաքարյուն ձի ու ռազմադաշտ ե տանում հսկա լական մի գունդ:

— Սա վոչ թե Վալլա Շիշկովա լե, այլ ամառե Բուդյոննի, մեր Բուդյոննին,— ծիծաղում ե Նյուշան:



ՎՐԱՆՆԵՐԻՅ՝ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ

Նյութալից իմացա, վոր մանկապարտեզի բոլոր զնչաները բանվորների յերեսաներ են: Կոլյա Գրաչեփի հայրը աշխատում է «ԱՄՈ» գործարանում՝ Վալյա Շիրկովայի հայրը՝ կաշեգործարանում, իսկ մայրն աշխատում է «Փարիզյան կոմմունա» ֆաբրիկայում: Միայն Պաշկան և Ստյոպա Շատրովաների գործն է անհաջող զնացել նրանց ծնողները զեռ սպասում են վրաններում, Մոսկվայի Կոննաչա հրապարակում, Պաշկայի և Ստյոպայի մայրը խաղաթուղիք ձեռքին զեռ թափառում և բուլվարներում ու պառազների դեմը կտրելով՝ սուղաբերուն է:

— Արի բազադ գուշակեմ, այ գեղեցկուհի, ամեն ինչ ձեռքը կտանեմ... Նա չի համարձակվում ջանքերն ընդունալ. վախենում է հանդիմանեն:



— Հապա ինչպէս են Շատրոփաները համաձայնփել իրենց լերիսաներին մանկապարտեզ ուղարկել, — հարցնում են Նյուշալին:

— Յերկար ժամանակ չեյին ուզում. համառում եյին: Յես ու Վալլա Շիշկովայի մայրը զնացինք վրաններն ազիտացիայի, հաղիվ-հազ կարողացանք համոզել:

Յտրի ժամանակ կարծում եյին, վոր մենք, գնչուներս ծուլ ենք, գործից փախչող, գող... Ամենուրեք հալածում եյին մեզ, թունափորում մեր որը... Իրա համար ել ստիպված ապրում եյինք վրաններում ու շարունակ քոչում տեղից — տեղ:

Իսկ հիմա, խորհրդային իշխանութիան որով, մենք ել աշխատում ենք, ինչպէս բոլորը: Մենք ել ուրիշների նման ունենք մեր մանկապարտեզը, դպրոցը, ահումբը, թատրոնն ու հանրակացարանը:

Շատրոփայի նմանները քիչ են մնացել շուտով նրանց հետքը բոլորովի կվերանա:

Վալլա Շիշկովան ինձ ցույց է տալիս հյուանոցի անկյունը:

Ստրպա Շատրոփը, վոր դեռ մտաիկ անցյալում բուլվարներում պարում եր, կոպեկներ հավաքելով, այսօր նրա զբաղմունքի առարկան կազմում է

ԱՄՍԱԿԻ ԴՅՈՒՆՆԵՐԻ ԱՆԿՅՈՒՆ



սղոցը, մուրճն ու սոսինձը: Բիթը վեր քաշելով նա բարակ տախտակից ապագա արկղի համար խուփ ու տակ է սղոցում:

Լիբը Մուրճերով, սղոցներով ու տախտակի կտորներով լիբը պահարանի վրա գրված է Ամարե ստոլյաբնո Վենգլո, այսինքն՝ մեր հյուանոցի անկյունը:

ժ Ո Ղ Ո Վ Ը

— Ուզում եք ժողով գումարեմ, — հարցնում է Վալյա Շիշկովան:

— Շատ եմ ցանկանում, — պատասխանում եմ:

Նա աշխարհի վրա ամենից շատ սիրում է «իր սեփական» մանկապարտեզը: Նա ուզում է, վոր «իր» մանկապարտեզում ամեն ինչ այնպես լինի ինչպես մեծերի մոտ:

Նա մատերով խփում է սեղանին ու զիլ ձայնով հարցնում:

— Ձեզնից ո՞վ է ուզում գեկուցել: Ո՞վ հարցեր ունի:

— Իսկ ի՞նչ է դրված որակարգում, — հարցնում է Նյուշան:

— Վոչինչ: — Որակարգի մասին չեմ մտածել, — պատասխանում է Վալյա Շիշկովան:

Վոչ վոր չի ցանկանում գեկուցել, սակայն հարցեր ինչքան կամենաք:

— Ինչո՞ւ կոստյա կոննիկովի մայրը կոպտային վրանումն է պահում և չի թողնում, վոր մանկապարտեզ գա, — հարցնում է Սալոպա Շատրովը:

— Ինչո՞ւ կոստյան գիրք ու խաղալիք չունի, իսկ մեր մանկապարտեջում և գիրք կա և խաղալիք, — գրում է Պաշկա Շատրովը:

Նա քնից նոր եր վեր կացել, դրա համար ել ձայնը խապոտ եր դեռ:

— Ինչո՞ւ իմ քույրը բուլվարներում գուշակութուն է անում և չի սիրում աշխատել, — հարցնում է Ստերա Որյովը:

— Ինչո՞ւ իմ գդախն այնպես չի փայլում, ինչպես Պաշկա Շատրովի՞նր: Վալյա Շիշկովան մատերը սեղանին խփելով խնստ հայտարարում է:

— Խնդրեմ հիմար հարցեր չտար ել ո՞վ հարցեր ունի:

Հարցեր ել չկան, — վոչ հիմար, վոչ խերք...

Խոսքը տրվում է ժողովի նախագահ Վալյա Շիշկովային:

— Լուսթյուն լնկերներ լսեք, թե ինչ եմ ասում: Եկեք մենք ինքներս խաղալիքներ պատրաստենք ու տանենք վրաները՝ կոստյա կոննիկովի համար: Գիրք ել տանենք: Իսկ Ստեպաի քրոջ ձեռքից խաղաթղթերը տանենք, վոր նա ել գուշակութամբ չզբաղվի: Ճիշտ չե՞մ ասում, Նյուշա մորաքույր: Ճիշտ չե՞մ ասում, լերելեք... Ապա, ո՞վ է համաձայն:

Համաձայն են բոլորը: Յերեսուն թուխ, փոքրիկ թաթիկներ բարձրանում են վեր:

Ժողովը վերջանում է: Բոլոր հարցերը լուծված են:

— Յեկեք հիմի լել լերգենք, — ասում է Վալյա Շիշկովան: Նա այժմարդեն վոչ Բուդյոննին է, վոչ ել ժողովի նախագահը, այլ դիրիժոր է:

Նրա դիրիժորկան փայտ, մատերը բարձրանում է դեպի վեր ու լերելյաները լերգում են:





— Իսկ դու ինչու չես մասնակցում.— հարցնում են յես Վարյա Շիշկով-
ային:

— Այսոր իմ ձայնը կտրվել է,— պատասխանում է նա բամբ:
Յերգում ու պարում են յեղբայր Շատրովները՝ Պաշկան, — Ստյոպան:
Անցել է ամբ ժամանակը, յերբ կոպեկի համար նրանք պարում էին բուլ-
վարներում, ման էլին զախ պատառոտված հաղուստով ու ասրում էին
վրաններում:

Այժմ Պաշկան ու Ստյոպան լուսավոր սենյակ ունենե ելեկտրականութուն
Այժմ նրանք «Ամարե ստոլբարնո վենդլո» ունենե:
ԱՅԺՄ ՆՐԱՆԷ ԱՄԱՐԵ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՈՒՆԵՆ:



«Ազգային գրադարան»

 NL0392434

5266

Գրան՝ 60 ԿՄՊ.



891.71-93
 S-26

Ե. ԵԱՐԱԽՈՍԿԱԿԱ
 ԱՄԱՐՅ ԴԵՏՔԻՅ ՏԱԴ
 ԴԻՅ ՏՏՐԱ ԶՐԻՎԱՆԻ

ՀԻՆ: 2362 ՓԼԿԼԻՏ N: 7936(Բ) ՏԻՒՆՆ 4000
 ՎՊ. ՊԵՏՐՈՍԻ N: 3043